ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Գավառ, Կենտրոնական հրապարակ 7, 1201, 060650035, gegharkunik@mta.gov.am

N 02/4629-2026

«27» 05 2026թ.

«Դ.Ջ.Ա» ՍՊ ընկերության տնօրեն
Նաիրա Ներսիսյանին
(հասցե՝ Երևան, Մալաթիա Սեբաստիա Կիլիկիա թ., 46փ,
էլ.հասցե՝ nairanersisyan11@gmail.com)

ԾԱՆՈՒՑՈՒՄ

(Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ)

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 25.05.2026 թվականի զեկուցագրով ներկայացվել է տեղեկատվություն, որ 08.04.2026 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի և «Դ.Ջ.Ա» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կապալառու) միջև կնքվել է ՀՀ ԳՄ-ԳՀԱՇՁԲ-26/27 պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն Կապալառուն պարտավորվել է իրականացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի վարչական շենքի ընթացիկ նորոգման շինարարական աշխատանքները՝ պայմանագրով սահմանված ծավալներին, ժամկետներին և պայմաններին համապատասխան:

Պայմանագրի կնքմամբ Կապալառուն ստանձնել է պայմանագրով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգով, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող պայմանագրի ապահովման, որակի ապահովման և տույժերի վերաբերյալ համաձայնագրերով նախատեսված պարտավորությունները:

Պատվիրատուի կողմից իրականացված ուսումնասիրության և պայմանագրի կատարման ընթացքի նկատմամբ վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ

Կապալառուն պայմանագրի կատարման ընթացքում չի ձեռնարկել պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ, չի ներկայացել շինարարական աշխատանքների կատարման վայր և փաստացի չի սկսել պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացումը:

Արձանագրվել է նաև, որ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը լրացել է 25.05.2026 թվականին, սակայն նշված օրվա դրությամբ պայմանագրով նախատեսված աշխատանքները չեն կատարվել, պատվիրատուին չեն հանձնվել կատարված աշխատանքներ, չեն կազմվել հանձնման-ընդունման համապատասխան փաստաթղթեր, և պայմանագրով ստանձնած պարտավորությունները մնացել են ամբողջությամբ չկատարված:

Վերոգրյալ հանգամանքները վկայում են Կապալառուի կողմից պայմանագրային պարտավորությունների էական խախտման մասին, որի հետևանքով չի ապահովվել պայմանագրի նպատակի իրականացումը, իսկ պատվիրատուն զրկվել է պայմանագրի կնքման արդյունքում ակնկալվող արդյունքից:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պատվիրատուն իրավունք ունի պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու:

Հիմք ընդունելով վերոգրյալը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետի 25.05.2026 թվականի զեկուցագիրը, ինչպես նաև Պայմանագրի 8.11-րդ կետը՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմը ամբողջությամբ միակողմանի լուծում է 08.04.2026 թվականին կնքված ՀՀ ԳՄ-ԳՀԱՇՁԲ-26/27 պետական գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին սույն ծանուցումը հրապարակվելու է գնումների տեղեկագրում: Կապալառուն համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն

ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը կուղարկվի նաև Կապալառուի էլեկտրոնային փոստի հասցեին:

Միաժամանակ հայտնում ենք, որ պայմանագրի լուծումը չի դադարեցնում Կապալառուի՝ մինչև պայմանագրի լուծման պահը ծագած պարտավորությունները և չի ազատում վերջինիս պայմանագրի ապահովման, որակի ապահովման վերաբերյալ համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների կատարումից:

Հաշվի առնելով, որ Կապալառուի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունները չեն կատարվել, ենթակա է ներկայացման պահանջ՝

- որակավորման ապահովման գումարի՝ 432 594 (չորս հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր իննսունչորս) ՀՀ դրամի չափով:
- պայմանագրի ապահովման գումարի՝ 288 296 (երկու հարյուր ութսունութ հազար երկու հարյուր իննսունվեց) ՀՀ դրամի չափով:

Տեղեկացնում եմ, որ պայմանագրի լուծման հիմքերի վերաբերյալ տեղեկատվությունը «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ սահմանված կարգով ներկայացվելու է լիազորված մարմին:

Տեղեկացնում եմ նաև, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն, եթե մասնակցի կողմից հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվի լիազորված մարմնին համապատասխան որոշումը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց հետո, սակայն ոչ ուշ, քան լիազորված մարմնի կողմից մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար սահմանված քառասնօրյա ժամկետի ավարտը, իսկ որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ ոչ ուշ, քան տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելը, ապա պատվիրատուն այդ մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմնին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հետևաբար առաջարկվում է սույն ծանուցումը ստանալուց հետո տասն օրվա ընթացքում կատարել պայմանագրի ապահովման և որակավորման ապահովման համաձայնագրերից բխող ֆինանսական պարտավորությունները, ընդ որում՝

որակավորման ապահովման գումարը վճարել 900008000664 գանձապետական հաշվեհամարին, իսկ պայմանագրի ապահովման գումարը՝ 900005000758 գանձապետական հաշվեհամարին, և դրանց կատարման վերաբերյալ համապատասխան փաստաթղթերը ներկայացնել պատվիրատուին:.

Ստորագրող
ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ
2201650098

2026-05-27 10:58:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆՁ-ի կողմից

Հարգանքներով՝

ՍԻՄՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Իրավաբանական բաժին
Կատարող՝ Լիանա Մակվեցյան
Հեռ.՝ 060650615